«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հաստատություն ՝ <<Կապանի թիվ 8 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Քնարիկ Հայրապետյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը----------4-6
3. Նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները----------7-8
4. Հայրենասիրական դաստիարակության մակարդակը բարձրացնելու ուղղության տարվող աշխատանքները----------9

Գործնական մաս

5. Ամանորյա ավանդական ծես <<Տարեգաթա>>----------10-13
6. Առաջարկություն----------14
7. Եզրակացություն----------15
8. Գրականության ցանկ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սերը հայրենիքի նկատմամբ բոլոր ժամանակներում եղել է հայ ժողովրդների ազգային բնավորության կարևոր գիծ: Ժամանակի ընթացքում նկատվել է հայրենասիրական գաղափարախոսության գիտակցության թուլացում մեր հասարակության կողմից: Դրա հետ կապված ակնհայտ է դառնում նախադպրոցական տարիքում երեխաների մոտ հայրենասիրական զգացմունքների ձևավորումը բարոյական դաստիարակության կարևոր խնդիրներից է:

Այդպիսի զգացմունքները չեն կարող ձևավորվել մի քանի պարապմունքների ընթացքում: Այդ ամենը ձևավորվում է երեխայի վրա երկարատև, համակարգված, նպատակաուղղված ներգործության արդյունքում: Մանկավարժի և ծնողների խնդիրն է երեխայի մեջ, որքան հնարավոր է շուտ արթնացնել սերը հայրենի երկրի նկատմամբ, նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ իրենց երկրին արժանի մարդ և արժանի քաղաքացի:

Հետազոտական աշխատանքի նպատակը.

1. Երեխաների մոտ ձևավորել հայրենասիրական հատկություններ, հարստացնել գիտելիքները սեփական քաղաքի, երկրի, մշակույթի, ավանդույթների մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:

2. Մեթոդների միջոցով բարձրացնել սաների հայրենաճանաչողության թեմայի կարևորության մակարդակը:

ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ առաջատար տեղ է զբաղեցնում քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությունը: Նախադպրոցական տարիքում հայրենաճանաչողության խնդիրը մանակվարժության ամենադժվար խնդիրներից է: Հայրենասիրությունը իր մեջ ներառում է սերը դեպի հայրենիքը, սեփական ժողովրդի մշակույթը: Հայ մեծ լուսավորիչ, մանակվարժ Խ. Աբովյանը, խոսելով ազգային ավանդույթների դաստիարակչական նշանակության մասին գրում է, որ ուսուցումը և դաստիարակությունը պետք է համապատասխանեն ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հետևաբար ազգային ավանդույթները, արժեքները և ընտանիքն այն էական գործոններից են, որոնցով պիտի պայմանավորվի նոր սերնդի դաստիարակության գործընթացը:

Ամեն ազգի խնդիրն է՝ պահպանել իր սերնդի կրթությունը և դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով և հատկապես բարբառախոս միջավայրի պայմաններից ելնելով: [2, էջ 9]

Սաների հայեցի դաստիարակությունը ժամանակակից հումանիստական դաստիարակության գլխավոր նպատակն է: Միշտ էլ շրջանառության մեջ է գտնվել այն գաղափարը, որի լավ հիմքի վրա դրված կրթությունը, որը նպաստում է ժողովրդի մակարդակի բարձրացմանը, համապաստասխանում է ժամանակի պահանջներին, արդեն ազգային է:

Լիարժեք կրթության շնորհիվ է հնարավոր հասնել այն բանին, որ ազգն ունենա ընդհանուր կամք՝ տիրանալու իր նախկինների կերտած հայրենիքին, տեր կանգնելու իր անցյալի հաջողությունոններին և անհաջողություններին, հաղթանակներին ու պարտություններին՝ ձգտելով ունենալ ընդհանուր կամք ապագայի նկատմամբ, կերտելով իր ապագան: [3, էջ 120]

Հայ հրապարակախոս, բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը իր հոդվածներում շարադրում է, որ աճող սերնդի դաստիարակությունը պետք է սկսվի ամենավաղ տարիքից, որովհետև այդ տարիների ստացած տպավորությունները խորն են, անջնջելի:

Մ. Թաղիադյանը հաճախ էր կրկնում, որ մանկան կրթելը նման է պարտեզ մշակելուն: Որքան խնամքով մշակվեն և ժամանակին ջրվեն ծառերը, այնքան պարտեզը սաղարթախիտ ու հարուստ կլինի: Անհրաժեշտ է ծնողներին հասկացնել, որ երեխային պետք է կրթել, դաստիարակել դեռ վաղ տարիքից: Երեխան մանկուց պետք է ճանաչի, սիրի իր երկիրը:

Հայ գրող, հրապարակախոս Ռաֆֆին, ով նաև մեծ հայրենասեր էր, անչափ անհանգստանում էր հայ մանուկների դաստիարակության և կրթության համար: Նա նշում էր, որ երեխաների ոգին մաքուր է, նրանց ինչպես դաստիարակես, այնպես էլ կմեծանան, ուստի դեռ վաղ տարիքից պետք է երեխաներին կրթել, դաստիարակել: [4, էջ 17-22]

Երեխան ապրելով որոշակի միջավայրում <<գծում>> է իր ազգի մշակույթը: Մանկուց երեխան լսում է իր մայրենի լեզուն, որով խոսում է, օրորոցային երգերը, հեքիաթները, խաղում է ժողովրդական խաղեր, հետևում է ընտանեկան սովորություններին, ազգային ավանդույթներին: Ուստի հայրենիքի և ժողովրդի հանդեպ սիրո զգացումը սկսվում է սեփական տան հանդեպ սիրուց: [7, էջ 58] Այսպիսով կարևոր է յուրաքանչյուր երեխայի մեջ ձևավորել անհատական վերաբերմունք տան՝ որպես սոցիալական արժեքի նկատմամբ:

Հայրենասիրության զգացումը իր կառուցվածքով և բովանդակությամբ բազմակողմանի է: Այն ներառում է պատասխանատվություն, հայրենիքի բարօրության համար աշխատելու ցանկության և կարողության, նրա հարստության պահպանում և ավելացում: Սա գեղագիտական զգացմունքների մի ամբողջ գունապնակ է՝ կազմված հայրենի քաղաքի, հայրենի բնության հանդեպ սիրո հետ:

Աստիճանաբար <<հայրենի տուն>> հասկացությունն ընդլայնվում է: Այն արդեն հարազատ փողոցն է, իր մանկապարտեզը, հայրենի քաղաքը, հետագայում՝ հայրենիքը, որի քաղաքացին է ինքը, և վերջապես Երկիր մոլորակը՝ մեր ընդհանուր տանը: Այսպիսով դաստիարակը աստիճանաբար հարստացնում է երեխայի գիտելիքները հայրենի երկրի մասին:

Կ.Դ.Ուշինսկին հայրենասիրությունը համարում էր մարդկային արժանապատվության հիմնական չափանիշը: Նա նաև ենթադրում էր, որ հայրենասիրությունը ոչ միայն կրթության կարևոր խնդիր է, այլ նաև մանկավարժական հզոր գործիք: [8, էջ 127]

Հայրենաճանաչողության դաստիարակությունը բարդ մանկավարժական գործընթաց է, որի արդյունքում նախադպրոցական երեխաների մոտ ձևավորվում է հայրենիքի հանդեպ կապվածության, նվիրվածության, պատասխանատվության զգացում:

Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ոլորտում կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ այս տարիքում դրվում են անհատականության հիմնական հիմքերը, սկսվում է կրթության գործընթացը և սոցիալ-մշակույթային փորձի ձևավորումը, ձևավորվում է <<մարդը>>: Հնագույն իմաստունը ասում է, որ մարդ, ով չգիտի իր անցյալը, չգիտի ոչինչ: Առանց սեփական արմատներին, ժողովրդի ավանդույթներին ծանոթանալու անհնար է դաստիարակել լիիրավ մարդ, ով սիրում է իր ծնողներին, իր տունը, իր երկիրը: Մարդու, որպես քաղաքացու ձևավորումը պետք է սկսվի իր փոքրիկ հայրենիքից՝ հարազատ քաղաքից: [10, էջ 101]

Այսպիսով հայրենասիրության հիմքը պետք է դնել մանկուց և այդ ժամանակ կարող ենք հուսալ, որ կդաստիարակենք իսկական հայրենասեր, ով ճանաչում և սիրում է իր հայրենիքը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում այսօր իրականացվում է ծանոթացում հասարակական երևոյթներին և դրանց հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորում: Երեխային փոխանցում են գիտելիքները ընտանիքի և հայրենիքի, ծնողների,

մասնագիտության և աշխատանքի, ազգային խորհրդանիշների և վառ ներկայացուցիչների մասին։

Ս.Արղությանը իր խորին համոզմամբ կրթական բոլոր հաստատությունների, հատկապես դպրոցի և մանկապարտեզի գլխավոր առաքելությունը՝ իր ժողովրդին նվիրված քաղաքացու և հասարակական գործչի ձևավորումն է։ Նախադպրոցականի ազգային մտածելակերպի տարրերի ձևավորման և դրսևորումները պայմանավորված են մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակահարմարությամբ, կրթության բովանդակության ազգային ուղղվածությամբ, ինչպես նաև դաստիարակների և ծնողների սոցիալական դիրքորոշումներով։

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի, նախադպրոցական կրթական հաստատության և դպրոցի հաջորդական և փոխպայմանավորված մանկավարժական գործունեությունը:

Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր: Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի և ընտանեկան դաստիարակության գերակայող դերը երեխայի դաստիարակության և նրա անձնավորության ձևավորման գործում: [1, էջ 114]

Դեռ վաղ տարիքում անմիջապես ընտանիքում դրվում է հայրենասիրության հիմքը, արթնանում է սիրո զգացում հայրենի քաղաքի հանդեպ:

Հայրենաճանաչողության, հայրենասիրության դաստիարակության գործընթացը պետք է սկսել նախադպրոցական տարիքից: Այս ժամանակահատվածում են ձևավորվում երեխայի անհատականության մշակույթային և արժեքային հիմքերը, տեղի է ունենում նրա հույզերի, զգացմունքների, մտածողության զարգացումը, հասարակության մեջ սոցիալական հարմարվողականության մեխանիզմները, սկիզբ է դրվում ազգային մշակույթային ինքնորոշումը, շրջակա աշխարհում սեփական անձի գիտակցման գործընթացին: Հասարակական կյանքի այս հատվածը առավել բարենպաստ է երեխայի վրա հուզական և հոգեբանական ազդեցության համար, քանի որ իրականության ընկալումն շատ վառ է և ամուր, այդ իսկ պատճառով դրանք հիշողության մեջ մնում են երկար, երբեմն էլ ամբողջ կյանքի ընթացքում:

Հայրենաճանաչողության դաստիարակությունը սկսվում է մոր, հարազատի հանդեպ սիրո զգացմունքից, որը աստիճանաբար ձևավորվում է դիմացինի նկատմամբ կարեկցանքի, ընկերական ջերմության:

❖ Հայրենաճանաչողության դաստիարակությունը նշանակում է դաստիարակել սեր, կապվածություն հայրենի քաղաքի նկատմամբ:

❖ Հայրենասիրական դաստիարակությունը ենթադրում է գոհունակության և կապվախության զգացում ծննդավայրի և տան, մտերիմների նկատմամբ:

❖ Հայրենաճանաչողության դաստիարակության կարևոր գործոն է հանդիսանում բնությունը: Բնությունը հատուկ դեր է վերապահված, քանի որ այն միշտ շրջապատում է երեխային, շատ վաղ է մտնում նրա կյանք, հասանելի և հասկանալի է նրան:

❖ Հայրենաճանչողության, հայրենասիրության հաջողությամբ է ընթանում երեխաներին մշակույթային ժառանգության մեջ ներգրավելու գործընթացում: Ժողովրդական մշակույթն ու արվեստին իրենց հնարավորություններով պայմաններ են

ստեղծում երեխայի ազգային հատկանիշները բացահայտելու և զարգացնելու առավել բարենպաստ միջավայրում։

Անհրաժեշտ է լայնորեն կիրառել բանահյուսության բոլոր տեսակները։ Բանահյուսության մեջ պահպանվել են հայ ժողովրդի բնավորության գծերի առանձնահատկությունները, նրա բնորոշ բարոյական արժեքները, պատկերացումները բարության, գեղեցկության, ճշմարտության, քաջության, աշխատասիրության և հավատարմության մասին։

Երեխաներին ծանոթացնելով ասացվածքներին, հանելուկներին, առածներին՝ մենք մոտեցնում ենք նրան մարդկային բարոյական արժեքներին։

Առածներում և ասացվածքներում տեղի են գնահատում կյանքի տարբեր կողմերը, դրանք ծաղրում են թերությունները, գովում մարդկային դրական հատկությունները։ Բանահյուսությունը երեխաների ճանաչողական և բարոյական զարգացման ամենահարուստ աղբյուրն է։ [5, էջ 46]

❖ Ժողովրդական տոններն ու խաղերը պետք է առաջնային տեղ զբաղեցնեն երեխաների հայրենաճանաչողության դաստիարակության գործընթացում։

Հայրենաճանաչողական հայրենասիրական դաստիարակության նպատակով կիրառվող մեթոդները առավել արդյունավետ կլինեն հետևյալ պայմաններում.

1. Անհրաժեշտ է, որ մեթոդը լինի իրագործելի և տրամաբանորեն ամբողջական։

2. Մեթոդները գործելու համար պետք է նախապես պատրաստ լինեն պայմաններն ու միջոցները։

3. Դաստիարակության մեթոդը պետք է կիրառել նրբանկատորեն և անուղղակի։ Երեխան չպետք է զգա, որ իրեն դաստիարակում են։

4. Մեթոդները ընտրելու ժամանակ անհրաժեշտ է ենթադրել կոնկրետ երեխայի վրա դրանց ազդեցության հնարավոր արդյունքները։

5. Հայրենասիրական դաստիարակության մեթոդների կիրառումը ենթադրում է համբերատարություն և տոկունություն։ Հարկավոր է գիտակցաբար մոտենալ այն հանգամանքին, որ արդյունքին հնարավոր է հասնել ոչ միանգամից հարկավոր է կրկնել մեթոդները, փորձել նորերը։

6. Հայրենասիրական դաստիարակության մեջ պետք է լինեն գործնական մեթոդները։

Մեթոդի ընտրության հիմքում ընկած է դաստիարակչական խնդիրն ու երեխայի տարիքը։

Ժամանակակից մանկավարժությունն ունի նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության արդյունավետ դաստիարակության լայնածավալ գործիքներ։ Բայց առավելագույն արդյունքի կարելի է հասնել հայրենասիրական և բարոյական զգացմունքներ ձևավորող մեթոդների և միջոցների համալիր օգտագործման դեպքում։

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

❖ Դաստիարակի նպատակաուղղված աշխատանք:

❖ Հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ ծնողների պատկերացումների բացահայտում:

❖ Ծանոթացնել հայկական ժողովրդական տոների ավանդույթներին և սովորույթներին, մոտեցնել ազգային մշակույթի ակունքներին:

❖ Ձևավորել հետաքրքրություն հարազատ քաղաքի, նրա պատմության հերոսական սխրանքների հանդեպ, պատասխանատու վերաբերմունք նրա տեսարժան վայրերի, մշակույթային արժեքների և բնության նկատմամբ:

❖ Դաստիարակել սեր և կապվածության հայրենիքի նկատմամբ:

❖ Ընդլայնել երեխաների գիտելիքները սեփական պետության, նրա խորհրդանիշների, պատմամշակույթային, տեսարժան վայրերի մասին:

❖ Ուսուցման հիմնական մեթոդներից է խաղը: Խաղը երեխաներին ներգրավում է գիտելիքների որոնման գործընթացում, խաղը զարգացնում է երևակայությունը, հիշողությունը և ուշադրությունը:

ԱՄԱՆՈՐՅԱ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍ. <<ՏԱՐԵԳԱԹԱ>>

Քանի որ մոտենում էր Ամանորը՝ երեխաների սիրելի տոնը, իմ ընտրությունը կանգ առավ հենց ամանորյա ծիսակատարության վրա, բայց այս անգամ որոշեցի ուսումնասիրել և սաներիս ծանոթացնել հին հայկական ավանդական ամանորյա ծիսակատարությանը՝ ծիսական խաղերին, ավանդույթներին, ծիսական խոհանոցին, ազգային երգ ու պարին:

Աշխատանքը բաժանեցի երկու մասի՝ <<Նախատոնական օր>>, որտեղ սաները պետք է ծանոթանան տոնի պատմությանը, միասին պատրաստենք խաղալիքներ և այլն: Եվ <<Տոնական օր>> արդեն մեր ձեռքով պատրաստած խաղալիքներով պետք է զարդարենք տոնական ծառը՝ Կաղանդ ծառը, թխենք Տարեգաթան և այդ ամենը համեմենք մեր ազգային երգ ու պարով:

ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ ՕՐ: Սաներին պատմեցի, որ հնում եղևնու փոխարեն Ամանորին հայերը զարդարել են Կաղանդի ծառը, ընդ որում զարդերը եղել են բնության պարգևները, ինքնաշեն խաղալիքները և այլն: Նրանց հետ պատրաստեցինք թելերից տարբեր խաղալիքներ, տալով մարդկային կերպարներ, որն էլ պետք է զարդարեր մեր տոնական ծառը:

Այնուհետև ընկույզներով պատրաստեցինք չրխկաններ <<Չարխափան>> խաղալու համար:

Աննկարագրելի էր սաների ոգևորությունն ու հրճվանքը: Պատմեցի Ամանորին պատրաստվող ուտեստների մասին և խոստացա, որ միասին կպատրաստենք Տարեգաթա:

<<ՏԱՐԵԳԱԹԱ>>: Հնում մարդիկ հավատացել են, որ Նոր տարվա գաթան՝ Տարեգաթան, հաջողություն, բերք ու բարիք, փող է բերում նոր տարում: Գաթան թխել են արևի տեսքով, վրան զանազան նշաններ արել, մեջը մետաղադրամ կամ այլ փոքր նշան են դրել: Ամանորի գիշերը գաթան կտրել են ընտանիքի անդամների թվով: Նա, ում ընկնում էր <<նշանը>>, համարվել է այդ տարվա հաջողություն բերողը, նույնիսկ հավատացել են, որ նա կարող է մարդկանց բուժել:

Սաների հետ սովորեցինք բարեմաղթանքներ, որը պետք է արտասանեն կաղանդ ծառը զարդարելուց:

ՏՈՆԱԿԱՆ ՕՐ: Մեր տոնական ծառը՝ Կաղանդի ծառը, զարդարեցինք սաների ձեռքով պատրաստած խաղալիքներով: Յուրաքանչյուր խաղալիք կախելիս սաները բարեմաղթանքներ ասեցին.

Երգ-<<Ավետիս>>, ազգային ժողովրդական երգ:

***

Շնորհավոր մեր Նոր տարի...

Թող ամենուր ծաղկի բարին,

Թող Նոր տարում, Սուրբ Ծննդով

Աստված բարին միշտ կատարի։

***

Զմեռ պապը թող լույս բերի,

Երջանկություն, կյանք ու բարիք,

Ջերմ խնդություն՝ օջախներին,

Մանուկներիս՝ պայծառ գալիք։

***

Զմեռ պապը մեր իմաստուն

Բերի եւ երգ, բերի եւ պար,

Անսահման սեր, խաղաղություն,

Հրաշքների մի ողջ աշխարհ։

***

Թող այս Նոր տարն խաղաղություն բերի

***

Թող պանդուխտները տուն վերադառնան

Երգ-<<Զար, զընգը զար>>, ազգային ծիսական ժողովրդական երգ։

Թող հավետ լռեն բոլոր զենքերը, երկնքում ճախրեն աղավնիները։ Կաղանդի ծառից անցում կատարեցինք ծիսական ուտեստներին, պատրաստեցինք ծիսական Տարեգաթան։

Տարեգաթայի պատրաստման համար աղջիներն ալյուր մաղեցին և արտասանեցին.

***

Ձյունի սպիտակ ալյուր մաղեմ,

Բերք-բարիքի տարի լինի։

Անուշ-անուշ խմոր շաղեմ,

Արտս ցորեն- գարի լինի,

Կլոր կարմիր գաթա թխեմ,

Թող թխածս բարի լինի:

Հետո յուղն ու մածունը լցրեցինք,հավկիթները կոտրեցինք, իսկ տղաները մեր անուշաբույր գաթայի համար ընկույզ կոտրեցին, որն էլ ավելացրեցինք խմորին և մի լավ հունցեցինք: Ավանդույթի համաձայն մենք էլ գաթայի մեջ կոպեկ դրեցինք, որ հետո կտրենք և տեսնենք թե ում է բաժին հասնելու:Վերջում արևանման սիրուն տեսք տվեցինք և տարանք, որ կախենք թոնիրը:

Մինչև գաթի թոնիր կախելը, տղաները ցորեն շաղ տվեցին թոնրի կրակին ու արտասանեցին.

Թող տարին բարի լինի,

Թող բերքն առատ լինի:

Որը խորհրդանշում էր ինչքան ցավ ու չոռ կա, աղքատություն ու սով կա, թող հին տարին իր հետ տանի, իսկ նոր տարին իր հետ բերի ջերմություն, խաղաղություն, լիություն: Մինչ գաթայի պատրաստ լինելը միասին խաղացինք սաների պատրաստած՝ ընկույզե չրխկաններով, <<Չարխափան>> խաղը (սաների, դաստիարակի ձեռքին մեկական Չարխափան է: Պետք է խափանեն, քշեն ամեն տեսակ վատը, չարը, անցանկալին, խանգարողը: Նախ՝ մաքրում, քշում, հեռացնում են իրենց խմբի չար, անցանկալի երևույթները, ապա իրենց համար անցանկալին: Իհարկե, վերջինս կատարվում է հետաքրքիր, անսպասելի հարցերի և երկխոսության օգնությամբ: Ի դեպ, խաղը խաղալու համար պարտադիր չէ Ամանոր ու Չարխափանի առկայություն: Երբ ինչ որ բան այնպես չի ընթանում, կարելի է հիշել, որ Չարխափանը չքացնում է խանգարողը. «Որ քո անուշադրությունը Չարխափանը չքացնի»: Շատ կարևոր է այդ ամենն անել հումորով, թեթև, խաղային):

Երգ-<<Լորկե>>, հայկական ծիսական պար:

Խաղի ընթացքը. Երեխաները չարխափաններով, ոտքերի դոփյուններով, շրխկացնում և աղմկում են: Ներկաներից մեկը հարցնում է.

- Ի՞նչ եք անում:

- Մուկն ենք բռնում:

- Որ ի՞նչ անեք:

- Որ ուղարկենք:

- Ու՞ր:

- Մկստան:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:

- Ցուրտն ենք բռնում:

- Ու՞ր ուղարկեք:

- Իր երկիրը՝ հյուսիս……

(Նշվածների փոխարեն կարելի է քշել այն, ինչն ավելի հարմար կգտնեն՝ իրենց ընկերների վատ արարքները, դժվար, տհաճ և այլ երևույթներ)

Ահա եկավ Տարեգաթան թոնրից հանելու պահը: Սաները շուրջպար բռնեցին և ուրախ երգի ներքո հանեցինք անուշաբույր, արևաշող գաթան: Գաթան թոնրից հանելուց հետո կարեցինք և երեխաները ճաշակեցին:

Երգ-<<Եկեք ծեծենք սոխ ու սխտոր>>, ազգային ծիսական երգ-պար:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ելնելով նշվածից՝ առաջ են եկել հետևյալ առաջարկությունները.

Մենք պետք է օգտագործենք բոլոր տեսակի բանահյուսությունները՝ հեքիաթներ, ասացվածքներ, երգեր, տաղեր, պարեր։ Ժողովրդական արվեստում պահպանել բարոյական արժեքներ՝ բարություն, գեղեցկություն, ճշմարտություն, քաջություն, աշխատասիրություն, հավատարմություն։

Երեխայի մեջ վաղ տարիքից պետք է արթնացնել գեղեցիկի հանդեպ զգացումը։ Օգնել երեխային հասկանալ, որ նա հայ ժողովրդի մի մասնիկն է։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայրենաճանաչողության դաստիարակությունը անձի դաստիարակության հիմնական ուղղություններից է։ Այն նպատակաուղղված և համակարգված գործունեություն է՝ ուղղված անձի մոտ հայրենասիրական բարձր գիտակցության ձևավորմանը։ Աճող սերնդի դաստիարակությունը պետք է սկսել ամենավաղ տարիքից, որովհետև այդ տարիներին ստացած տպավորությունները խորն են և անջնջելի։

❖ Անհրաժեշտ է հարստացնել երեխաների գիտելիքները հայրենասիրության հետ կապված։

❖ Բարձրացնել ընտանեկան դաստիարակության արժեքները։

❖ Համալիր պարապմունքների շարունակակակն կազմակերպում՝ հայրենասիրական գիտելիքների փոխանցում։

❖ Բարոյական դաստիարակություն՝ ուղղված ազգային արժեքների յուրացմանը։

Երեխաները մեր ապագան են և անկախ նրանից, թե ինչ միջոցներ և ուղիներ ենք մենք օգտագործում հայրենաճանաչողության դաստիարակության նպատակով, պետք է դա անենք աստիճանաբար։

Ուսումնասիրելով և քննելով ազգային ծիսական տոնակատարությունների արժեքը,հայրենաճանաչողական գործունեության զարգացման հարցում՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների.

❖ Ազգային ծեսն այն միջավայրն է, ուր բացահայտվում և տրվում են մարդկային հնարավորությունների սահմանները ամբողջությամբ։

❖ Ազգային ծեսերը անհրաժեշտ է դարձնել մեր կյանքի անբաժան մասը՝ սկսելով նախադպրոցական ուսումնական հաստատություններից։ Կարելի է ասել միջոցառման շնորհավոր հասա իմ նպատակին:

Երեխաների մեջ դաստիարակեցի ճանաչել, սիրել, պահպանել, գնահատել այն ամենը ինչը մեր ազգայինն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ա.Ս.Մարության, Ս.Մ.Դալլաքյան
- <<Ծաղրածու>> զարգացնող նյութերի ժողովածու 2-6 տարեկանների համար, էջ 82
- Մարության Ս.Ս., Դալլաքյան Ա.Մ., Նախադպրոցական մանկավարժություն, Բուհական դասագիրք, էջ 126
- Ա.Վ.Թովմասյան <<Հայերի դաստիարակության հիմունքները>>, Ստեփանակերտ 2006
- <<Նախադպրոցական կրթություն>> ամսագիր, Մանկավարժական միտք հանդեսի հավելված, երևան 2008
- Վ.Լ.Թորգոմյան <<Մանկավարժության արժեաբանության հիմունքներ>>, Երևան Ան-Զոն 2011
- Բ.Մինասյնա <<Մանկավարժության հիմունքները>> Թավրիզ
- Власов НИ <<Воспитание в вопросах и ответах>>, www.porfal-Siovo.ru
- Ушинский К. <<Собрание сочинение>>, М. Просвещения 1946
- Макаренко А.С. <<Избранные педагогические сочинение>>, М. Просвещения 1946
- Кондукторова И.В. <<Исторические взгляды и современные подходы потриотического воспитания дошкольхиков>>